Տիտղոսաթերթ

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com
Հետազոտության թեմա/վերնագիր • Հետազոտության թեմա	Թեստերի մշակման սկզբունքներն ու ձևերը /ներդիր՝ 8-րդ դասարանի թեմատիկ թեստի կազմում/
Ուսուցչի տվյալներ • Ա.Ա.Հ. • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ	Համբարձումյան Ինգա Գրիգորի Հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Մայրենի, հայոց լեզու, գրականություն 5-12-րդ դասարաններ
Ուսումնական հաստատության տվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե	ՀՀ Կոտայքի մարզի «Կոտայքի Ս.Վարդանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ, Ակունք համայնք, գ.Կոտայք, Կենտրոնական փողոց, թիվ 4, kotaykvil@schools.am https://kotayq.schoolsite.am/

Բովանդակություն

Ներածություն ----------3

ԳԼՈՒԽ I: ԹԵՍՏԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ: ԹԵՍՏԵՐԸ՝ ԸՍՏ ՆՊԱՏԱԿԱԴՐՄԱՆ ----------4

1.1. Գիտելիքի ստուգման ընդհանրական թեստեր----------4

1.2. Առաջադիմության,սովորողի ձեռքբերումների ստուգման կամ ամփոփիչ թեստեր ----------5

1.3. Հայտորոշիչ կամ ախտորոշիչ թեստեր ----------5

1.4. Ուսուցողական կամ ձևավորող թեստեր ----------5

ԳԼՈՒԽ II: ԹԵՍՏԵՐ ԿԱԶՄԵԼՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ---------- 6

2.1. Հավաստիություն ----------6

2.2. Հուսալիություն ----------6

2.3. Անաչառություն ----------6

ԹԵՍՏԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ----------7

1. Կարճ թեստ ----------7

2.Ծավալուն թեստ ----------7

3.Ամփոփիչ թեստ ----------7

ԳԼՈՒԽ III: ԹԵՍՏԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ: ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ----------9

3.1. Բազմակի ընտրությամբ առաջադրանքներ ----------9

3.2.Բաց թողնվածը լրացնելու առաջադրանքներ ----------10

3.3.Համաձայնեցման առաջադրանքներ ----------10

3.4.Կարճ պատասխան պահանջող հարցադրումներ կամ առաջադրանքներ ----------11

3.5.Ընդարձակ պատասխան պահանջող հարցադրումներ կամ առաջադրանքներ ----------11

Եզրակացություն ----------14

Հավելված ----------15

Օգտագործված գրականություն 18

Ներածություն

Կրթական համակարգում ավանդաբար կիրառվող գրավոր աշխատանքների տարբեր տեսակները ժամանակի ընթացքում փոփոխվում են: Վերջին տարիներին ՀՀ հանրակրթական դպրոցներում, բուհերում և այլ ուսումնական հաստատություններում լայն տարածում է գտել հարցարանային /թեստային/ եղանակը՝ որպես գիտելիքների ստուգման լավագույն միջոց: Թեստերը լայն կիրառություն ունեն աշխարհի շատ երկրների կրթական համակարգերում:

1. <<Թեստ>> բառը թարգմանաբար նշանակում է փորձարկում կամ ստուգում:Այն ի հայտ է եկել 20-րդ դարասկզբին և կիրառվել է տարբեր ոլորտներում և ծառայել է որոշակի հետազոտություններ կատարելուն:Բազմաթիվ մանկավարժներ և հոգեբաններ [Թանգամյան Տ. Վ. , Մայորով Ա. Ն., Բենջամին Բլում] զբաղվել են թեստերի կազմման , դրանց տեսակների, սկզբունքների, կառուցվածքի, բովանդակության ուսումնասիրությամբ և գրել բազմաթիվ հոդվածներ:

Ես ևս փորձել եմ ուսումնասիրել և դիտարկել թեստերի մշակման սկզբունքներն ու ձևերը /ներկայացրել եմ նաև թեմատիկ թեստի նմուշօրինակ/:

Գլուխ առաջին

Թեստերի նշանակությունն ու տարբերությունը: Թեստերը՝ ըստ նպատակադրման

Կրթական ոլորտում թեստը կիրառվում է ուսուցանված նյութի յուրացման և իմացության, որոշակի կարողությունների ձևավորման սահմանը ստուգելու համար: Այն լավագույն ժամանակակից միջոց է կարճ ժամանակահատվածում ստուգելու ստվար թվով սովորողների գիտելիքներն ու հմտությունները: Այն համարվում է գնահատման արագ, արդյունավետ, անաչառ մի ձև:

Թեստի դերը հատկապես մեծանում է հեռահար ուսուցման, համակարգչով ինքնաստուգում իրականացնելու ժամանակ:

Թեստային առաջադրանքները պետք է համապատասխանեն առարկայական ծրագրերին և չափորոշիչների պահանջներին:

Այլ կարգի ուսուցանող կամ ստուգման նպատակով հանձնարարվող առաջադրանքներից թեստը տարբերվում է իր համակարգվածությամբ, հատուկ ձևով, առաջադրանքների տրամաբանական որոշակիությամբ, առաջադրանքի պատասխանի հակիրճ դատողությամբ / այն թեստի կարևոր հատկանիշներից մեկն է/, հատուկ կառուցվածքով:

Թեստերում ընդգրկված առաջադրանքները կազմված են պարզից բարդ սկզբունքով, այն երկվության առիթ չպետք է տա, պատասխանը պետք է լինի, և սովորողը պիտի ընտրի տրվածներից, առաջադրանքների միջև պետք է հաջորդական կապ պահպանվի:

Թեստերն՝ ըստ նպատակադրման

Ըստ նպատակադրման՝ թեստերը կարող են լինել՝ գիտելիքի ստուգման ընդհանրական, առաջադիմության կամ ամփոփիչ,հայտորոշիչ կամ ախտորոշիչ, ուսուցողական կամ ձևավորող:

1.Գիտելիքի ստուգման ընդհանրական թեստեր

Այս տիպի թեստերն ընդգրկուն են և կարող են ներառել մի քանի տարվա ընթացքում ուսուցանված նյութ: Այդպիսին են կրթարանների, ավարտական և բուհերի ընդունելության համար կազմված թեստերը:Այս տիպի թեստերը հանձնարարվում է ուսումնական գործընթացի ավարտին կամ բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվելիս:Այս տեսակի թեստերը պետք է կազմի ԳԹԿ-ի կողմից ընտրված մասնագետների հատուկ խումբ, և կարևոր նախապայմանն այն է, որ այդ թեստերի կազմման աշխատանքներին ներգրավվեն նաև ուսուցիչներ,և թեստերի առաջադրանքները կազմված լինեն ԳԹԿ-ի առարկայական ուղեցույցներին համապատասխան:

2.Առաջադիմության, սովորողի ձեռքբերումների

ստուգման կամ ամփոփիչ թեստեր

Այս թեստերը հանձնարարվում են նյութի ամփոփման ժամանակ, յուրաքանչյուր կիսամյակի, ուսումնական տարվա ավարտին, որպեսզի ստուգվեն տվյալ նյութի յուրացման մակարդակը և աստիճանը:

3.Հայտորոշիչ կամ ախտորոշիչ թեստեր

Այս թեստերը պարբերաբար տրվում են սովորողների ուժեղ և թույլ կողմերը, բացահայտելու , հետագայում ուսուցման որակը բարելավելու, և այդ գործընթացում որոշակի բարեփոխումներ կատարելու նպատակով:Նրա հիմնական նպատակը առկա վիճակը ամրագրելն է:Այս տիպի թեստերի միջոցով ուսուցիչը կարող է ժամանակին արձագանքել աշակերտի փոփոխվող ուսումնական կարիքներին, պահանջմունքներին և պլանավորել իր հետագա անելիքը:

4.Ուսուցողական կամ ձևավորող թեստեր

Այս թեստերը հանձնարարվում են ուսումնառության գործընթացում՝ օժանդակելով գիտելիքի ձեռքբերմանը, գործնական կիրառությանը, ստեղծագործական և տրամաբանական մտածողության զարգացմանը:Ուսուցանող թեստի առաջադրանքը պետք է ունենա ուսուցանող բնույթ,որը կնպաստի սովորողի ուսումնական առաջընթացին և համագործակցային հմտությունների զարգացմանը:Աշակերտները կարող են օգնել միմյանց կամ օգտվել գրականությունից՝ ի տարբերություն հայտորոշիչ կամ ամփոփիչ թեստերի: Այս թեստի նպատակն է՝ պարզել, թե որքանով է աշակերտին հաջողվում կատարել անհատական աշխատանք /վերլուծել, հետազոտել/, կարողանում է արդյոք օգտվել գրականությունից կամ այլ ուսումնական միջոցներից /տես հավելված 1/:

Գլուխ երկրորդ

Թեստեր կազմելու հիմնական սկզբունքներն ու կառուցվածքը

Թեստ կազմելու հիմնական սկզբունքներն են՝ հավաստիությունը, հուսալիությունը և անաչառությունը:

1.Հավաստիություն

Թեստի հավաստիությունն ապահովելու համար անհրաժեշտ է այնպես կազմել այն, որ առաջադրանքները համապատասխանեն սովորողի տարիքային առանձնահատկություններին, ընդունակություններին: Առաջադրանքի բովանդակությունը պետք է աշակերտին լինի ծանոթ:Եթե ուսուցիչը որոշել է ստուգել օրինակ՝ գ-կ-ք բաղաձայնների ուղղագրության ընկալումը, ապա միայն այդ բաղաձայնների ուղղագրությանը վերաբերող առաջադրանքներ պիտի կազմի: Ուղղագրական բառերը պետք է ընտրի դասագրքի այն առաջադրանքներից, որոնք արդեն աշակերտները կատարել են տանը կամ դասարանում՝ որպես անհատական կամ խմբային աշխատանք:Եվս մեկ օրինակ բերենք՝ եթե ուսուցիչը որոշել է կազմել օրինակ՝ 8-րդ դասարանի համար թեստ հայոց լեզվից /թեման՝ նախադասության տեսակներն ըստ հաղորդակցման նպատակի/,ապա համապատասխան օրինակները կարող է դուրս գրել տվյալ դասարանի գրականության դասագրքից / գերադասելի է անցած թեմաներից ընտրված նախադասություններ/:

2.Հուսալիություն

Թեստի հուսալիությունը ստուգման և գնահատման հաստատուն ու համարժեք լինելն է:

Այսինքն՝ հուսալի կամ արժանահավատ են օրինակ՝ գ-կ-ք բաղաձայնների ուղղագրությանը վերաբերող այն նմանատիպ թեստերը,որոնք հանձնարարվում են միևնույն խմբին մի քանի անգամ՝ տարբեր օրերի, և արդյունքները գրեթե նույնն են ստացվում:

3.Անաչառություն

Թեստն անաչառ է միայն այն դեպքում, եթե թեստավորման արդյունքները պայմանավորված չեն գնահատողի անձով:Թեստերը ապահովում են գնահատման օբյեկտիվությունը և նվազագույնի են հասցնում ուսուցչի կանխակալ մոտեցումը:

Թեստերի կառուցվածքը

Ամբողջ ծրագրային նյութը կարելի է բաժանել թեմաների և կազմել երեք տիպի թեստ՝ կարճ, ծավալուն, ամփոփիչ:

1.Կարճ թեստ

Յուրաքանչյուր թեմա բաղկացած է ենթաթեմաներից:Աշակերտի կողմից տվյալ ենթաթեմայի նյութի յուրացման ընդհանուր մակարդակը ստուգելու համար անհրաժեշտ է տալ կարճ թեստ:

Կարճ թեստերի քանակը կարող է հավասար լինել ենթաթեմաների թվին:Այս տիպի թեստերի առաջադրանքների քանակը պետք է լինի տասից ոչ ավել,իսկ տեսակները՝ ընտրովի կամ կարճ պատասխաններով:Թեստը գրելու տևողությունը 10-15 րոպե պետք է լինի, իսկ բնույթը՝ փաստերի իմացություն:

2.Ծավալուն թեստ

Ծավալուն թեստը հանձնարարվում է յուրաքանչյուր թեմա անցնելուց հետո՝ տվյալ թեմայի նյութի յուրացման աստիճանը ստուգելու նպատակով:

Այս տիպի թեստային առաջադրանքի տևողությունը 45 րոպե է, առաջադրանքների քանակը՝ 15, տեսակները՝ ընտրովի,կարճ, ծավալուն պատասխան պահանջող հարցադրումներով:Առաջադրանքների բնույթը՝ փաստերի իմացությունն է, գիտելիքի կիրառումը,տրամաբանական եզրահանգումը, վերլուծությունը:

Ծավալուն թեստերի քանակը պետք է հավասար լինի ծրագրային նյութի թեմաների թվին:

3.Ամփոփիչ թեստ

Ամփոփիչ թեստը հանձնարարվում է ամբողջ ծրագրային նյութն անցնելուց հետո՝ ամեն կիսամյակի վերջում:

Այս թեստի առաջադրանքների քանակը պետք է լինի մոտավորապես՝ 30, տեսակները՝ ընտրովի, կարճ, ծավալուն, ստեղծագործական մոտեցում պահանջող, համապատասխանեցման առաջադրանքներով կամ հարցադրումներով:

Առաջադրանքների բնույթը՝ փաստերի իմացություն, գիտելիքի կիրառում, տրամաբանական եզրահանգում, վերլուծություն, տևողությունը՝ 90 րոպե:

Գլուխ երրորդ

Թեստերի բովանդակությունը, թեստային առաջադրանքների տեսակները

Գրեթե բոլոր կառուցվածքի թեստերում՝ կարճ, ծավալուն , ամփոփիչ, կիրառվում են առաջադրանքների հետևյալ տեսակները՝ բազմակի ընտրությամբ առաջադրանքներ, բաց թողնվածը լրացնելու առաջադրանքներ, համաձայնեցման կամ համապատասխանեցման առաջադրանքներ,կարճ պատասխան պահանջող առաջադրանքներ, ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքներ:

1. Բազմակի ընտրությամբ առաջադրանքներ

Թեստային այսպիսի առաջադրանքներում պատասխանի տարբերակները երկուսն են, երեքը, չորսը կամ հինգը:

Հարցվողը պետք է գտնի ճիշտ պատասխանը

Օրինակ՝ . Նշիր այն բառը, որի մեջ գրվում է է

1/ վեր-լք

2/ վայր-ջք

.Վանկը կոչվում է փակ, եթե վերջանում է՝

1/ ձայնավորով

2/բաղաձայնով

3/գաղտնավանկով

Եթե ստորոգյալի լրացում դերբայական դարձվածը ձևավորված է համակատար /ելիս, ալիս/ դերբայով, ապա նախադասության անդամներից՝

1/ չի տրոհվում

2/ տրոհվում է բութով

3/ տրոհվում է ստորակետով

4/ տրոհվում է բութով և ստորակետով

.Նշեցեք այն բառակապակցությունը, որում փոխաբերական իմաստով գործածված բառ կա.

1/ անխոնջ մշակ

2/ հերոս մարտիկ

3/կուսական անտառ

4/ տրորված արահետ

5/ երկնակարկառ գագաթ [1]

2.Բաց թողնված լրացնելու առաջադրանքներ

Այսպիսի առաջադրանքների դեպքում ևս պատասխանները տրված են, հարցվողը պետք է ընտրի համապատասխան բառը և լրացնի բաց թողնված տեղում: Օրինակ՝ .Ճիշտ նախադասություն ստանալու համար ո՞ր բառը պետք է տեղադրել բաց թողնված տեղում:

Գեյզերները հաճախ համեմատում են հրաբուխների հետ , ---------- երկուսն էլ տաք հեղուկ են ժայթքում ընդերքից:

1/քանի որ

2/ չնայած

3/ կարծես

4/ որոնք

5/ այնպես որ[2]

3.Համաձայնեցման կամ համապատասխանեցման առաջադրանքներ

/այս առաջադրանքը կարելի է նաև հանձնարարել՝ օգտագործելով Learning apps.org գործիքը/

Ձախ շարքում տրված բառերից չորսը համապատասխանում են աջ շարքի բառակապակցություններին:Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

ա/ մատուռ	1/ աստիճանների ծող
բ/ բուրվառ	2/ հեթանոսական տաճար
գ/ բազրիք	3/ խնկարկելու անոթ
դ/ նշխար	4/ փոքրիկ եկեղեցի
ե/ մեհյան	

1/ ա-4, բ-1, դ-3, ե-2

[1] Հայոց լեզու, Գրականություն: Պետական ավարտական և միասնական քննության ուղեցույց, Երևան 2016թ, էջ134

[2] Հայոց լեզու, Գրականություն: Պետական ավարտական և միասնական քննության ուղեցույց, Երևան 2016թ.:

2/ ա-4, բ-3, գ-1, է-2

3/ ա-2, բ-3, գ-1, է-4

4/ ա-4, բ-3, գ-1, դ-2[3]

4. Կարճ պատասխան պահանջող հարցադրումներ կամ առաջադրանքներ

Այսպիսի առաջադրանքների պատասխանը պատրաստի չի տրվում, սովորողը ինքը պիտի պատասխանի այդ հարցադրումներին /պատասխանները չպետք է ծավալուն լինեն/:

Օրինակ՝

Շարունակիր և լրացրու շարքը

.Բայն ունի հինգ եղանակ՝ ա/ սահմանական

բ/ ----------

գ/ ----------

դ/ ----------

է/ ----------

5.Ընդարձակ պատասխան պահանջող հարցադրումներ կամ առաջադրանքներ

Առաջին չորս տեսակի թեստերն առավել հուսալի են, ապահովում են գնահատման անաչառությունը և ստուգում գիտելիքի մտապահումը, ընկալումը, կիրառումը:

Որքան առաջ ենք շարժվում Բենջամին Բլումի աստիճանակարգով /պարզից բարդ/, այնքան նվազում է գնահատման անաչառությունը, քանի որ ստեղծագործական բնույթի ծավալուն պատասխան պահանջող առաջադրանքները, երևակայության դրսևորումը գնահատելը բարդ գործընթաց է: Այդ իսկ պատճառով գնահատումը իրականացվում է հատուկ սանդղակով, որպեսզի ապահովվի անաչառ մոտեցումը:

Այս տիպի առաջադրանքները բացահայտում են սովորողի տրամաբանելու, վերլուծելու, համադրելու, դատողություններ անելու կարողությունը:

Այս տեսակի առաջադրանքները պետք է հանձնարարել իբրև առանձին առաջադրանք կամ էլ տեղադրել թեստային աշխատանքի վերջում՝ որոշակի սահմանափակումով

Օրինակ՝

.Դիցաբանական որևէ զրույցի մասին կարճիք գրիր[4] :

---

[3] Պետական ավարտական և միասնական քննությունների թեստային առաջադրանքների ժողովածու և 15 թեստ: Հայոց լեզու և հայ գրականություն:Երևան,2011թ., էջ23

[4] Հայոց լեզու և Գրականություն:Գնահատման առաջադրանքների նմուշների ժողովածու:Երևան ,Տիգրան Մեծ , 2007, էջ 123-124

Այս ստեղծագործական աշխատանքի գնահատման սանդղակը նախօրոք ներկայացվելու է աշակերտներին:

3 միավոր	Շարադրանքն ունի կուռ տրամաբանություն. բերում է փաստեր՝ ասածն ապացուցելու համար : Դատողություններն ինքնուրույն և ինքնատիպ են: Քերականական և ոճական առումով ճիշտ կառույցներ է կիրառում:
2 միավոր	Շարադրանքը տրամաբանական է . իր խոսքը հաստատող օրինակներ է բերում զրույցից: Դատողությունները հիմնականում ինքնուրույն են:
1 միավոր	Շարադրանքը հիմնականում տրամաբանված է: Դատողությունները գրքային են:Ոճական և Քերականական բնույթի սխալներ կան:
0 միավոր	Հիմնականում վերաշարադրել է զրույցի բովանդակությունը, եզրահանգում–դատողությունները բացակայում են:

Թեև թեստային եղանակով գիտելիքների ստուգումը լայն կիրառություն ունի ժամանակակից կրթական համակարգում, սակայն միշտ չէ, որ հարցարանի կիրառումը հստակ պատկերացում է տալիս սովորողի գիտելիքների մասին:Այդ իսկ պատճառով թեստ կազմողները պետք է հստակ իմանան, թե ինչը հնարավոր է , և ինչը հնարավոր չէ գնահատել թեստի միջոցով:

Այսպիսով, համարվում է , որ թեստի ազդեցությունը դրական է , եթե այն կառուցված է ուսուցանված նյութի շրջանակում, հիմնված է ոչ թե սոսկ մտապահման,այլ իմացածը ի մի բերելու, տրամաբանելու,գիտելիքը դրսևորելու և կիրառելու վրա:

Թեստ կազմողները առաջադրանքներն ու վարժությունները պետք է ընտրեն չափորոշիչներին համապատասխան, ծրագրի ու դասագրքի ընձեռած հնարավորությունների սահմաններում:

Մինչ թեստերի զանգվածային կիրառումը, անհրաժեշտ է ստուգել օգտագործման արդյունավետությունը, ենթարկել վիճակագրական վերլուծության /այն չպետք է առանձին առաջադրանքների շարք լինի, այլ՝ հատուկ մշակված և փորձարկված համակարգ/:

Եզրակացություն

Համամիտ եմ այն դիրքորոշման հետ, որ թեստերի կիրառումը՝ որպես գիտելիքների ստուգման նոր մեթոդ, առավել արդյունավետ կլինի, եթե տարբեր կարողությունների տեր երեխաների համար կազմվեն անհատական թեստեր:Անհատական ստուգիչ թեստեր կարելի է կազմել նաև նմանատիպ կարողությունների տեր աշակերտների համար՝ բարդության աստիճանը և պահանջները թողնելով նույնը,առաջադրանքը՝ որոշակիորեն փոփոխելով:

Կարծում եմ, որ միայն ուսուցանող թեստն է անհրաժեշտ կազմել 4 կամ 5 տարբերակով / որպեսզի հնարավորություն ունենան խմբային ձևով ևս կազմակերպել աշխատանքը/, իսկ գիտելիքի ստուգման ընդհանրական և ամփոփիչ թեստերի տարբերակները պետք է կազմել դասարանում առկա սովորողների թվով / որքան՝ աշակերտ, այնքան՝ տարբերակ/, որը կբացառի արտագրության հնարավորությունը:

Հանձնարարել եմ 8-րդ դասարանի աշակերտներին անհատական թեստեր և ամփոփելով այդ աշխատանքները՝ բացահայտել եմ յուրաքանչյուր աշակերտի առավելություններն ու թերացումները:Այն թե՞ ինձ, թե՞ աշակերտին հնարավորություն է տվել ճիշտ կազմակերպելու հետագա աշխատանքը:

Ինքնահանաչողության սկզբունքով աշակերտը իրապես կպատկերացնի իր գիտելիքի մակարդակը և հստակ կպլանավորի հետագա անելիքը՝ ջանքերը կենտրոնացնելով թերի կողմերի վրա:

Ինտերակտիվ վարժություններով թեստեր /օրինակ՝ համապատասխանեցում/ կարելի է կազմել նաև ՝ օգտագործելով Learning apps.org գործիքը:

Հավելված 1

Թեստի կազմում

Առարկան- Հայոց լեզու

Դասարանը- 8-րդ

Թեման- Հարցական նախադասություն, ձևավորումը և խոսքի մեջ կիրառությունը:

Նպատակը- Հարցական հնչերանգի ընկալում, գրավոր խոսքում հնչերանգին համապատասխան կետադրելու կարողության ձևավորում:

Տևողությունը- 15-20 րոպե

Չի գնահատվում, քանի որ նախատեսված է ուսուցողական աշխատանքի համար:

8-րդ դասարան

Հարցական նախադասություն

/ուսուցանող կամ ձևավորող թեստ/

1.Կետադրի՛ր տրված հատվածը

-Եթե օրինավոր որդի լիներ,- շարունակեց հիվանդը,- ձեզ նման պատվավոր հյուրերին այսօր այս խոզաբնում կընդուներ: Տեսնում եք, աթոռներ էլ չունինք:Անամո՛թ, ինչ ես ցցվել փայտի պես: Չես տեսնում հյուրերիս: /Շ./[5] :

[5] Դավիթ Գասպարյան, Գրականություն, դասագիրք 8-րդ դասարանի համար, Երևան <<Տիգրան Մեծ>> ՓԲԸ հրատարակչություն , 2022թ էջ 94

2.Ճիշտ տարբերակների թվահամարները վերցրու՛ շրջանակի մեջ

1/Հայ մարզիկնե՞րը հաղթեցին:

2/Հայ մարզիկները՞ հաղթեցին:

3/Մի՞թե վերջին պոետն եմ ես...

4/Միթե՞ վերջին պոետն եմ ես.../Վ.Տ./ [6]

3.Կետերի փոխարեն տեղադրիր համապատասխան բառերը և ստացիր հարցական հնչերանգի նախադասություններ

ա/-Հայրի՛կ, ... ետ չդարձան

Էն քաջերը սիրատենչ

....., հայրի՛կ , ինձ մոռացան,

Էլ չեն բերիլ հուրն անշեջ:

բ/ Անց է կենում դարձյալ տարին:

Նայում է կույսն ամեն օր.

- ..... է, հայրի՛կ, ... կգա նա՝

Սարից թռած ձիավոր: /Հ. Թ./ [7]

/ու՞ր,ե՞րբ,ինչու՞,մի՞թե/

4/Հարցում արբահայտող բառերի վրա դի՛ր համապատասխան նշանը

ա/-Անտո՛նիո, ասա՛ ինձ՝ ով ես դու:

-Ես որբ եմ:

-Ով է հայրդ:

-Մի բանվոր, որ մեքենայի տակ ջարդվեց և մեռավ: / Նար-Դոս/ [8]

---

[6] Դավիթ Գասպարյան, Գրականություն, դասագիրք 8-րդ դասարանի համար, Երևան <<Տիգրան Մեծ>> ՓԲԸ հրատարակչություն , 2022թ էջ 236

[7] Դավիթ Գասպարյան, Գրականություն, դասագիրք 8-րդ դասարանի համար, Երևան <<Տիգրան Մեծ>> ՓԲԸ հրատարակչություն , 2022թ էջ 159-160

[8] Դավիթ Գասպարյան, Գրականություն, դասագիրք 8-րդ դասարանի համար, Երևան <<Տիգրան Մեծ>> ՓԲԸ հրատարակչություն , 2022թ,էջ 131-132

բ/ Ես չեմ հիշում՝ երբ և ուր

Հանդիպեցի քեզ, և դու ... / Վ.Տ./

Ախար առանց զենքի ու զրահի, մենակ ուր ես գնում, ինչ ես անում: /Դ.Դ./

5/Կազմիր մեկական հարցական նախադասություն ո՞ր , ո՞վ, ո՞րերորդ հարցական դերանուններով:----------
---

6/Գրիր փոքրիկ երկխոսություն,որը հագեցած կլինի հարցական բնույթի նախադասություններով:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հանրակրթական հիմնական դպրոցի հայոց լեզու առարկայի չափորոշիչ և ծրագիր, 8-րդ դասարան:

2. Հայոց լեզու, Գրականություն: Պետական ավարտական և միասնական քննության ուղեցույց, Երևան 2016:

3. Հայոց լեզու և Գրականություն: Գնահատման առաջադրանքների նմուշների ժողովածու:Երևան ,Տիգրան Մեծ , 2007:

4. Հայոց լեզվի և գրականության ուսուցիչների եռօրյա վերապատրաստման ուղեցույց /գնահատման համակարգ/ երևան, Տիգրան Մեծ, 2007 :

5. Պետական ավարտական և միասնական քննությունների թեստային առաջադրանքների ժողովածու և 15 թեստ: Հայոց լեզու և հայ գրականություն:Երևան,2011:

6. Հովհաննես Բարսեղյան,Փառանձեմ Մեյթիխանյան , Հայոց լեզու, դասագիրք 8-րդ դասարանի համար,<<Աստղիկ գրատուն>> հրատարակչություն,Երևան 2022:

7. Դավիթ Գասպարյան, Գրականություն, դասագիրք 8-րդ դասարանի համար, Երևան <<Տիգրան Մեծ>> ՓԲԸ հրատարակչություն , 2022:

8. Մ. Մկրտչյան, Ս. Գալոյան:Սովորելուն նպաստող ուսումնական ձեռքբերումների ստուգման մի մոտեցում: Մանկավարժություն 2014, N 5, էջ 42-43: